

գինների յետևից հասնել չի կարող: Նրա «Իէպի անհունը» պարունակում է շատ սիրուն, շատ բանաստեղծական կտորներ, որոնք կարգացում են հաճոյքով և կը կարգացուէին նոյնիսկ՝ անկախ ընդհանուր իդէայից և ամբողջութիւնից, որոնք երկունս էլ՝ ի դէպ է ասել՝ թոյլ են տարուած:

\*  
\*\*

Այս բոլորից յետոյ իբրև վերջնական եզրակացութիւն՝ կարծում ենք՝ կարելի է ասել, որ պ. Թումանեանին անպայման յաջողում են պոէմաները և այն՝ ժողովրդական կեանքից, ներկայ, թէ անցեալ: Կարծ, կտրուկ ոտանաւորների մէջ նրա երևակայութիւնը սղմուել չի կարողանում: Նա բնութեան որդի է, լայնարձակ դաշտերի և լեռների, խոր-խոր ձորերի օդն է շնչել, հեքը լայն է և երկար. նրան կարծես հարկաւոր է ազատ տեղ տարածուելու, բանաստեղծական քմահաճոյքով փոռուելու համար: Ինքը՝ պ. Թումանեան գիտակցում է այդ, թէ՞ ոչ, այդ միևնոյն է, բայց նրա հոգում ապրում է հայ ժողովուրդը: Նա երգում է այդ ժողովուրդը, երգում հէնց նրա համար: Եւ լաւ է, շատ լաւ է, որ այդպէս է:

Ա.

Բակուրան՝ «Եփարոս կղզին». աշխարհագրական-պատմական տեսութիւն և հայ գաղթականութիւն: Նիկոսիա, տպարան Ազգ. Գրթարան-Որբանոցի, 1903, գինն է 1 շիլինգ կամ 1 Ֆր. 25 սանտ.

Գեղեցկութեան և սիրոյ դիցուհի Աֆրոդիտէի ծննդավայր այդ կղզին երկար դարերի ընթացքում բազմաթիւ ազգեր իբրար ձեռքից են խլել—նախապատմական հետիտներից յետոյ փինիկէցիները, ասորիները, եգիպտացիները, պարսիկներ. V դարում Գրիստոսից առաջ նա դառաւ յունական և չնայած յետագայ դարերի նուաճողներին—արաբ, լատին, ջենովեան, վենետիկեան, հայկական—չնայած 1571 թւականից հաստատուած օսմանեան ընտելութեան և 1878 թւականից բրիտանական պրոտեկտորատին՝ Կիպրոսը շարունակում է մնալ յունական իր ազգաբնակչութեան գերակշռող մասով: Զարմանալի չէ որ այժմ էլ նրա մէջ նշմարուում է ձգտում—միանալ Յունաստանի քաղաքական մարմին:

1901 թւականին կատարուած ժողովրդագրութեամբ այդ կղզու ամբողջ ազգաբնակչութիւնը հաւասար էր 237,022 հոգու, որոնցից 182,732 յոյն, 51,309 մահմէդա-

կան, 1130 մարտնիներ և միայն 562 հոգի հար, կար, նաև աննշան թուղ հրէաներ, իսկ կղզիաբնակ անգլիացիները— վարչական և զինւորական ծառայողներ—215 հոգի: Յունական գերիշխանութիւնը արտայայտուած է ոչ միայն եկեղեցիների և վանքերի թուղ (607 եկ. և 94 վ.), այլև հրատարակուող թերթերի քանակութեամբ. Կիպրոսում բացի պաշտօնական երեք-լեզուեան (անգլիերէն-յունարէն-թիւրքերէն) թերթից լոյս են տեսնում 8 յունական և 1 թիւրքերէն թերթեր:

Հայերը, որոնք երբեմն (Լուսինեանների) ժամանակ նշանաւոր դեր են կատարել այդ կղզում, այժմ ողորմելի դիրք ունեն այդտեղ. հայերի ազգային հաստատութիւններն են՝ կղզու մայրաքաղաք Նիկոսիայում (17 հազ. բնակիչ) մի եկեղեցի և քաղաքից հիւսիս-արևելեան ուղղութեամբ 5-6 ժամ հեռաւորութեան վրայ Ս. Մակարի վանքը, մօտ 2<sup>1</sup>/<sub>2</sub> անգլիական ակր հողով: Բացի այդ, եօթ տարի է որ Նիկոսիայում գոյութիւն ունի Ազգային Կրթարան-Որբանոցը մօտ 32 աշակերտներով: Պ. Բակուրանի գրքոյկը առհասարակ շատ բազմակողմանի և բովանդակալի կերպով է կազմուած և ամփոփ գաղափար է տալիս այդ կղզու թէ անցեալի և թէ ներկայի մասին. արտօս որ գէթ մի փոքրիկ քարտէզ չի կցուած նրան:

## Լ. Ս.

Գ. Այսլերդեան՝ «Հայ Առուղներ». հրատարակուած խմբագրութեամբ Վղզազրական Հանդիսի. Ա-ԺԱ, 527 երես, 1903 թ., Թիֆլիս, գինն է?

Մեզ թուում է թէ Գ. Այսլերդեան սրանից կէս դար առաջ, երբ ազգագրական գիտութիւնը դեռ նոր էր ծնունդ առնում, անհամեմատ աւելի լաւ էր հասկացել ազգագրական նիւթերի կարևորութիւնը և նրանց հրատարակելու ձևը, քան «Ազգագրական Հանդէս»-ի խմբագրութիւնը, որի գեղեցիկ ապացոյցը «Գուսանքի» հրատարակութիւնն է:

Խմբագրութիւնը բոլորովին անհիմն կերպով աշուղներին իրանց երգերով բաժանել է բարբառներին—Արարատեան, Գանձակի, Թիֆլիսի և Հաշտարխանի: Այդ մասին մենք խօսելու ենք մի այլ անգամ, ուստի և անցնում ենք հրատարակութեան այլ պակասութիւններին, որոնք միայն ապացուցանում են վերևում մեր ասածը: Այսպէս 1) Ջահիլ-Օղլան աշուղի մասին մի ծանօթութեան մէջ ասուած է, որ Ջահիլ և Ջահէլ-Օղլանները հաւանորէն տարբեր անձինք են, առանց մտածելու, որ Ջահիլ և Ջահէլ բառերը նոյնն են: 2) Որ նա հաշտարխանցի